**Արձանագրություն N 2**

**«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար ավտոմեքենաների անիվների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/6-02» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Երևան «28» նոյեմբերի 2016թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Կարեն Համբարձումյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ) Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար

*հանձնաժողովի անդամներ՝*

**Կարեն Մեղքոնյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Արման Ղուկասյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Սարգիս Արմենակյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար:

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Մարիամ Հայրապետյան** (Գնման Պատասխանատու/Մրցույթի համակարգող՝ ԳՊ/ՄՀ) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

*Նիստից բացակայում է հանձնաժողովի անդամ Արավին Բուդուլյանը՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար:*

**1. «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/6-02» ծածկագրով ընթացակարգի ներկայացված հայտերի բացման մասին.**

1.1 Հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգի /այսուհետ՝ Համակարգ/ միջոցով 2016թ.-ի նոյեմբերի 28-ին, ժամը 11:00-ին:

**2.Տեղեկատվություն գնման առարկայի ընդհանուր գնի վերաբերյալ.**

2.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 44-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման առարկայի ընդհանուր գինը՝ մեկ թվով արտահայտված.

| Չ/Հ | Չափաբաժնի անվանումը | Գնման առարկայի ընդհանուր գինը՝ մեկ թվով արտահայտված /ՀՀ դրամ/ |
|---|---|---|
| 1 | Ավտոմեքենաների անիվներ | 191300 |
| 2 | Ավտոմեքենաների անիվներ | 96000 |
| 3 | Ավտոմեքենաների անիվներ | 180000 |

2.2 Հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

| N | Մասնակցի անվանումը | Գտնվելու վայրը, հեռախոսահամարը |
|---|---|---|
| 1 | «ԴԱՐՖ» ՍՊԸ | ք. Երևան, Գայի պ. 1/7<br>Հեռ. (094)107706 |
| 2 | Ա/Ձ Հայկ Գալստյան | ք. Հրազդան, Կենտրոն թաղ. 84շենք, 5 բն.<br>Հեռ. (098)727788 |

2.3 Համակարգում 17.11.2016թ.-ի դրությամբ գրանցված մնացած բոլոր հնարավոր մասնակիցները հայտեր չեն ներկայացրել:

**3.1 Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**

**4.1.1** «ԴԱՐՖ» ՍՊԸ-ի և Ա/Ձ Հայկ Գալստյանի կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

**3.2 Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտերի /հայտերում առկա փաստաթղթերի/՝ հրավերի պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.**

**3.2.1** «ԴԱՐՖ» ՍՊԸ-ի և Ա/Ձ Հայկ Գալստյանի կողմից ներկայացված հայտերը /հայտերում ներառված փաստաթղթերը/ կազմված են հրավերի պահանջներին համապատասխան: Վերջիններս գնահատվում են բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

**4. Մասնակիցների առաջարկած գներն են՝**

| Հ/Հ | Չափաբաժնի անվանումը | 1. «ԴԱՐՖ» ՍՊԸ* | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | Ինքնարժեք | Շահույթ | Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ | ԱԱՀ | Առաջարկված գինը /ներառյալ ԱԱՀ/ |
| 1 | Ավտոմեքենաների անիվներ | 121212 | 12121 | 133333 | 26667 | 160000 |
| 2 | Ավտոմեքենաների անիվներ | – | – | – | – | – |
| 3 | Ավտոմեքենաների անիվներ | 60606 | 6061 | 66667 | 13333 | 80000 |

| Հ/Հ | Չափաբաժնի անվանումը | 2. Ա/Ձ Հայկ Գալստյան* | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | Ինքնարժեք | Շահույթ | Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ | ԱԱՀ | Առաջարկված գինը /ներառյալ ԱԱՀ/ |
| 1 | Ավտոմեքենաների անիվներ | 250000 | 38600 | 288600 | 0 | 288600 |
| 2 | Ավտոմեքենաների անիվներ | 140000 | 21000 | 161000 | 0 | 161000 |
| 3 | Ավտոմեքենաների անիվներ | 140000 | 21000 | 161000 | 0 | 161000 |

*«ԴԱՐՖ» ՍՊԸ-ն ներկայացրել է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտով առաջարկվող 1-ին և 3-րդ չափաբաժիններում նշված ապրանքները հանդիսանում են Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանք:*

*Ա/Ձ Հայկ Գալստյանը ներկայացրել է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտով առաջարկվող 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժիններում նշված ապրանքները հանդիսանում են Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանք:*

**5. Տեղեկություններ «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/6-02» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգը 2-րդ չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու մասին.**

2-րդ չափաբաժնի մասով հայտ ներկայացրած և ոչ գնային պայմանները բավարարող գնահատված միակ մասնակցի կողմից ներկայացված գնի առաջարկում 2-րդ չափաբաժնի մասով նշված ինքնարժեքի գումարն արդեն իսկ գերազանցում է այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները: Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը՝ 2-րդ չափաբաժնի մասով գների նվազեցման շուրջ բանակցություններ չեն վարվի:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց.

ա) «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/6-02» ծածկագրով ընթացակարգը 2-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած,

բ) հաստատել «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/6-02» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգը 2-րդ չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը (կցվում է).

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

6. <u>Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.</u>

6.1. <u>1-ին և 3-րդ</u> չափաբաժինների մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ԴԱՐՖ» ՍՊԸ – ին:

1-ին և 3-րդ չափաբաժինների մասով ներկայացված գնային այլ առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները,

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

<u>7. Հանձնաժողովի քարտուղարին.</u>

7.1 Ղեկավարվելով Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե ներկայացնել համապատասխան հարցումը:
7.2 Ղեկավարվելով Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետով՝ ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2016 թվականի դեկտեմբերի 02-ը ներառյալ, ներկայացնել Կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի <<գ>> պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

**8. Ղեկավարվելով Կարգի 49-րդ կետով՝ հանձնաժողովի նիստ հրավիրել 2016 թվականի դեկտեմբերի 06-ին, ժամը՝ 12:00-ին:**

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի՝

Նախագահ՝ Կարեն Համբարձումյան

Անդամներ՝ Կարեն Մելքոնյան

Արման Ղուկասյան

Սարգիս Արմենակյան

Քարտուղար՝ Մարիամ Հայրապետյան